ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վերջերս Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ հայ անվանի արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Ինճիկյանի հիշատակին նվիրված գիտաժողով։ Այն հրավիրված էր Հ. Ինճիկյանի ծննդյան 80-ամյակին և առիթ հանդիսացավ մեկ անգամ ևս վերհիշելու նրա վաստակը որպես դիտնակների, հայ արևելագիտության տաղանդավոր կազմակերպչի, դասախոս-մանկավարժի և արժանավոր մարդու։

Բացման խոսքով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ռ. Սահակյանը։ Ինչպես նա նշեց, Հ. Ինճիկյանը չհասցրեց տեսնել իր 80-ամյակի մեծարումը... Նա հեռացավ կյանքից 3 տարի առաջ, 1990-ի ապրիլի 5-ին՝ մինչև վերջ գրիչը ձեռքին։ Անժամանակ մահից մի քանի օր առաջ նա վերջնական ավարտի բերեց և տպագրության պատրաստեց իր նոր, հետաքրքիր աշխատությունը՝ «Սոցիալական հոգեբանություն և ցեղասպանություն» խորագրով, որը, ցավոք, առ այսօր չի հրատարակվել։ Ռ. Սահակյանն ընդգծեց Հ. Ինճիկյան-մարդու այնպիսի կարևոր հատկություններ, ինչպիսիք են սկզբունքայնությունը, մշտական հոգատարությունը գործի և օդնության կարիք ունեցողների հանդեպ։ Այնուհետև Ռ. Սահակյանը անցավ իր զեկուցմանը, որը վերնագրված էր «Հ. Գ. Ինճիկյանը՝ պատմաբան-արևելագետ»։ Սկզբում նա համառոտ ներկայացրեց Ինճիկյանի կենսագրությունը։ Զեկուցման երկրորդ մասում Ռ. Սահակյանն անդրադարձավ Հ. Ինճիկյանի գիտական վաստակին։ Նա նշեց, որ Հ. Ինճիկյան պատմաբանի աշխատանքը եղել է նպատակասլաց՝ ուսումնասիրել Օսմանյան Թուրքիայի XIX դ. երկրորդ կեսի—XX դ. սկզբի զարգացման ներքին օրինաչափությունները։ Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների և բազմազգ բուրժուազիայի ձևավորման առանձնահատկությունների հատուկ ուսումնասիրմանը։ Հ. Ինճիկյանի երկարամյա գիտական պրպտումների արդյունքը եղան «Օսմանյան կայսրության բուրժուազիան» և «Օսմանյան կայսրության անկումը» ծանրակշիռ հետազոտությունները։ Նշված մենագրություններում առաջ քաշված հարցադրումներն ու փաստարկված եզրակացությունները նոր խոսք էին Թուրքագիտության մեջ, ուստի և արժանացան բարձր գնահատականի՝ Հայաստանի և արտասահմանի գիտական հրապարակներում։

Օսմանյան կայսրությունն սենման պատճառներին էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սաֆրաստյանի զեկուցումը։ Ջարշացնելով Հ. Ինճիկյանի մենագրություններում տեղ գտած գաղափարները, զեկուցողը ճիշտ նշեց, որ օսմանյան ֆեոդալական համակարգն առանձնանում էր իր բազմասեռությամբ, այսինքն նույնը չէր, օրինակ Բալկաններում և Անատոլիայում, իսկ այդ բազմասեռությունը պայմանավորված էր կայսրության բազմազգությամբ։ Ռ. Սաֆրաստյանն ընդգծեց, որ կապիտալիստական հարաբերություններն էլ ծագում և զարգանում էին կայսրության տարբեր մասերում և տարբեր ազգությունների մեջ ոչ հավասարաչափ։ XIX դ. սկզբից ի վեր Թուրքիայի ղեկավարող շրջանները փորձում էին բարեփոխումների միջոցով փրկել քայքայվող պետությունը։ Հենվելով անգլիացի գիտնական Ա. Թոյնբիի «Ինդիր-պատասխան» թեզի վրա, Ռ. Սաֆրաստյանը նշեց, որ օսմանյան ղեկավարները պետք է ազգվատ պատասխան գտնեին երկու շատ կարևոր խնդիրների համար, այն է՝ անտնական ռեֆորմ և ազգային հարց։ Եվ եթե, ինչպես նշեց Ռ. Սաֆրաստյանը, տնտեսական խնդիրներում, այնուամենայնիվ, հաջողվեց երկիրն ընդգրկել համաշխարհային տնտեսական համակարգի մեջ, ապա ազգային խնդրում Թուրքիան դնաց կոտորածների, ցեղասպանության ճանապարհով, ձախողելով, փաստորեն, ազգային խնդիրների լուծումը, որը և բերեց նրա փլուզմանը, որպես բազմազգ պետություն։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Կորխմազյանի զեկուցումը վերնագրված էր «Հայկական տարածքների հարցը Պոտսդամի 1945 թ. կոնֆերանսում»։ Թեմայի ընտրությունը, ինչպես նշեց նա, իրեն հուշել էր Հ. Ինճիկյանը։ Դեռևս Պոտսդամի կոնֆերանսից առաջ 1945 թ. մարտի 19-ին խորհրդային Միությունը չեղյալ համարեց բարեկամության մասին 1925 թ. խորհրդաթուրքական պայմանագիրը, որպես նոր իրավիճակին չհամապատասխանող։ Կոնֆերանսի ընթացքում վեր բարձրացվեցին տարածքային հարցեր. Վ. Մո-

լոտովը նշում էր, որ 1921 թ. թուրքերն օգտագործեցին խորհրդային պետության թուլությունը և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը (խոսքը Կարսի և Արդահանի մասին էր)։ Այդ պատճառով խորհրդային կառավարությունը բարձրացրեց Խորհրդային Միության օրինական ձևով պատկանող տարածքների հարցը։ Իրականում խորհրդային կառավարությունը ուզում էր վերանայել Սևծովյան նեղուցներին վերաբերող Մոնթրոյի կոնվենցիան, կարևորը ուզում էր ռազմածովային բազա ստանալ նեղուցներում։ Անհանգստացած ԽՍՀՄ-ի այդ դիրքորոշումով, թուրքերը դիմեցին Անգլիային։ Եվ ինչպես վկայում է Պոտսդամի բանակցությունների ընթացքը, ստացան Լոնդոնի աջակցությունը։ ԱՄՆ-ի պրեզիդենտ Թրումենը նույնպես գտնում էր, որ Ի. Ստալինի կողմից բարձրացրած տարածքային խնդիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ Խորհրդային Միության ցանկությունը՝ իր ստրատեգիական դիրքերն ամրապնդել նեղուցներում։ Քանի որ Անգլիան և ԱՄՆ-ը դեմ էին ԽՍՀՄ-ի այդ նպատակներին, բանակցությունները որևէ արդյունք չտվեցին։

Գիտաշխատող Ա. Հովհաննիսյանի զեկուցումը նվիրված էր ցեղասպանության վերաբերյալ թուրքական նոր հրապարակումներին։ Ընդգծելով, որ ցեղասպանության թեման այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը, նա նշեց, որ մենք մեզ միշտ հարց ենք տվել, մի՞թե ժամանակակից Թուրքիայի հասարակական կարծիքն այդ խնդրում այդքան միատարր է. պարզվում է, որ ոչ։ Ա. Հովհաննիսյանը կանգ առավ թուրքական երկու վերջին հրապարակումների վրա, որոնցից առաջինը լույս է տեսել Բեռլինի «Ֆրայթագ» ամսագրում և վերնագրված է «100 տարի լռություն (նկատի ունենալով Ղարաբաղյան պատերազմը, հիշել հայոց ցեղասպանությունը)»։ Հեղինակը՝ Արզու Թոքերը, թուրք կին-հոգեբան է, որը ներկայումս ապրում է Քյոլնում։ Նա գրում է, որ այսօր, երբ Գերմանիայում վերելք է ապրում հակաթուրքական ազգայնականությունը և երբ թուրքերը գերմանացիներին մատնանշում են նրանց անցյալը, վատ չէր լինի հիշել նաև, որ թուրքերի պապերը ժամանակին կոտորել են հայերին։ Իր հոդվածի վերջում Արզու Թոքերը գրում է. «Շուտով կգա 1995 թ., կլրանա հայերի առաջին կոտորածների 100-ամյակը, իսկ մենք ուզում ենք մեր 100 տարվա լռությունը տոնել։ Մենք բողոքում ենք գերմանական ազգայնամոլության դեմ, սակայն որտեղ մնաց մեր ամոթը, մեր սուգն ու տխրությունը հայ զոհերի համար»։ Հաջորդ հրապարակումը թուրք գիտնական Ֆաներ Աքչամի «Թուրք ազգային ինքնությունը և հայկական հարցը» գիրքն է, որը լույս է տեսել 1992 թ. Ստամբուլում։ Գրքի հեղինակը միանգամայն ճիշտ նշում է, որ ներկայիս աշխարհում ղեկավարվել միմիայն «մենք ճիշտ ենք, իսկ նրանք սխալ» կարգախոսով, նշանակում է անընդհատ վերածնել, խթանել թշնամանքը։ Գիրքը մի փորձ է հասկանալու, թե ինչու իրականության մեջ գոյություն ունեցող Հայկական հարցը Թուրքիայում լուծվեց նման ձևով։ Ուշագրավ է, որ Աքչամը թուրք պատմագիտության մեջ առաջին անգամ օգտագործում է «սոյ քըրըմ» (ցեղի բնաջնջում) հասկացությունը, որը շատ մոտ է «ցեղասպանություն» եզրին։ Նա ցույց է տալիս, որ հայերի բնաջնջումը սովորական տեղահանություն չի եղել, այլ նախօրոք պլանավորված, կազմակերպված և իրականացված քաղաքականություն։ Բռնության վրա հիմնված պետությունը անընդհատ բռնություն է ծնում. սա է հեղինակի միտքը և զգուշացումը ժամանակակից թուրք քաղաքական գործիչներին։

Գիտաժողովի վերջում հիշողության խոսքերով հանդես եկան Հ. Ինճիկյանի գործընկերները՝ պրոֆ. Ե. Սարգսյանը, ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը և ուրիշներ։ Շնորհակալական խոսքով հանդես եկան Հ. Ինճիկյանի ընտանիքի անդամները։

Գիտաժողովի ընթացքում ճիշտ նշվեց, որ գիտնականը հիշողության մեջ մնում է իր աշխատություններով և աշակերտների գործերով։

Անցած գիտաժողովը եղավ ապացույցն այն բանի, որ Հ. Ինճիկյանը, փաստ, ստեղծել է մնայուն գիտական արժեքներ, որոնք իրենց շարունակությունն ու զարգացումն են գտնում հայ թուրքագիտության մեջ։

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ